ՄԻՀՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ 1920-1922ԹԹ.

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո հայ-ադրբեջանական հարաբերությունների ուսումնասիրության կարևորագույն առարկա է ադրբեջանական նավթի մատակարարման խնդիրը: Առհասարակ, 20-րդ դարի սկզբին էներգակիրների առկայությունը տնտեսության արդյունաբերական ճյուղերի զարգացման կարևորագույն գործոններից էր, և այս իրողությունը լավագույնս ընկալվում էր թե կապիտալիստական և թե խորհրդային երկրներում: Վրաստանի Կոմկուսի Թբիլիսիի կազմակերպության համաքաղաքային ժողովում 1920-1922թթ. ՈԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի նախագահ Գ.Օրջոնիկիձեն հռետորական հարց էր բարձրացնում. «Մի՞թե Բաքվի նավթը Սովետական Ռուսաստանին պետք չէ այնպես, ինչպես օդը մարդուն: Միթե՞ մենք կարող էինք Դոնեցկի ավազանի ավերման պայմաններում խոսել մեր արդյունաբերությունը վերականգնելու մասին, առանց Բաքվի վառելանյութի: Միթե՞ Դոնեցկի ավազանում ածխի հանույթը օգոստոսին եղած 9 միլիոն փթից հոկտեմբերին հասավ ամսական 46 միլիոն փթի, միթե՞ սրանով մենք պարտական չենք Բաքվի նավթին, որը մեզ տվեց վառելանյութի ապահովություն» (1, 73):

Խորհրդային Հայաստանի իշխանությունները ևս հանրապետության արդյունաբերական ճյուղերի զարգացման համար մեծ դեր էին տալիս ադրբեջանական նավթի ներկրմանը: Նշենք, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո հայ բոլշևիկների առջև ծառացած երկրի քայքայված տնտեսության վերականգնման գերխնդիրը անհնար էր իրականացնել առանց նավթի և առհասարակ էներգակիրների: Այս համատեքստում ուշագրավ է ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ալ.Մյասնիկյանի ելույթը 1922թ. հունվարի 26-29-ը տեղի ունեցած Հայաստանի Կոմկուսի առաջին համագումարի ժամանակ, երբ նա, հերքելով իր և ՀԿ(բ)Կ Կենտկոմի հասցեին հնչած խիստ քննադատությունը և ծանր մեղադրանքները, որ Լեռնային Ղարաբաղի հարցում չի դրսևորվել վճռականություն, հայտարարում էր, որ Կովկասյան բյուրոյի պլենումի նիստը հիշեցնում էր Հարավային Կովկասի հանրապետությունների նախկին ղեկավարների պայքարը. «... Ադրբեջանն ասում էր՝ եթե Հայաստանը պահանջի Ղարաբաղը, ապա մենք նավթ չենք մատակարարի» (3,13,23): Վերը նշվածը խոսում է այն մասին, որ Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը երկրի քայքայված տնտեսությունը զարգացնելու համար խիստ կարևորում էր էներգակիրների գործոնը և որոշակի

իմաստով ստիպված էր Ադրբեջանից նավթի մատակարարումների դիմաց քաղաքական զիջումների գնալ: Նշենք, որ Խորհրդային Հայաստանը նավթի մատակարարման հարցում շահավետ համագործակցություն կարող էր ստեղծել միայն Խորհրդային Ադրբեջանի հետ: Հայաստանի խորհրդայնացումից հետո նավթի մատակարարումը Հայաստանին կանոնավոր բնույթ ստացավ միայն 1922թ. սկզբներից, դրանից առաջ մատակարարումը տեղի էր ունենում շատ քիչ ծավալով և հիմնականում օգնության բնույթ էր կրում: Արխիվում պահպանված փաստաթղթերը թույլ են տալիս եզրակացնել, որ 1920-1922թթ. հայ ադրբեջանական «նավթային հարաբերությունների» գլխավոր ամիսները 1922թ. մարտ-օգոստոս ամիսներն էին: Հենց այս ամիսներին է, որ Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհը և ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհուրդը Ադրբեջանի պետական նավթային ընկերությունից՝ «Ազնեթից» ամենաշատ քանակով էներգակիրների պատվերներ են ձևակերպել: 1922թ. ապրիլին Խորհրդային Ադրբեջանում ՀԽՍՀ լիազոր ներկայացուցիչ Դովլաթովը հաղորդում էր, որ Խորհրդային Հայաստանի ԺՏԲԽ-ի պատվերով «Ազնեթը» Խորհրդային Հայաստան է արտահանել հետևյալ չափաքանակով նավթամթերք. Երևան- 5.310.000 փութ բենզին: Ալեքսանդրապոլ- 3.821.000 փութ նավթ: Դարաքիլիսա- 892.000 փութ նավթ(4, 40):

Դովլաթովի մեկ այլ զեկուցագրից տեղեկանում ենք, որ 1922թ. մայիսին ամեն մի երկաթգծային վագոնի համար վճարվել է 600.000 ռուբլի և ևս 30.000 ռուբլի կերոսինի փոխանակության համար(4, 24): Նույն փաստաթղթից տեղեկանում ենք նաև մայիսին Խորհրդային Հայաստան ներմուծված նավթամթերքների քանակի մասին: Այսպիսով, համաձայն Դովլաթովի զեկուցագրի՝ 1922թ. մայիս ամսին Խորհրդային Հայաստանի ձեռնարկությունների կարիքների համար Ադրբեջանից ներկրվել է 42.125.000 փութ նավթամթերք: Իսկ Վրաստանում Խորհրդային Հայաստանի տնտեսական ներկայացուցիչ Տեր-Միքայելյանի հաղորդած տվյալների համաձայն՝ 1922թ. հունիսին Խորհրդային Ադրբեջանը Հայաստանին մատակարարել է հետևյալ չափաքանակով նավթամթերքներ. Երկրորդ կարգի բենզին – 3.200.000 ռուբլի արժողությամբ: Կերոսին- 3.050.890 ռուբլի արժողությամբ(4, 54): Ի դեպ, Տեր-Միքայելյանը հաղորդում էր նաև, որ հունիս ամսին Խորհրդային Ադրբեջանից Հայաստան է ներկրվել 8.500.000 ռուբլի արժողությամբ սելդ ձկնատեսակ(4, 54): Հատկանշական է, որ «Ազնեթը» հաճախ մատակարարման պատվերները ամբողջությամբ չէր կատարում: Այս երևույթը հաճախակի բնույթ էր կրում այդ շրջանում, և հաճախ Խորհրդային Հայաստանի ԺՏԲԽ-ի պատվերները կատարվում էին միայն մասամբ: Եվ սա այն դեպքում, երբ 1922թ. ապրիլի 12-ին Խորհրդային Հայաստանի ԺՏԲԽ-ի նախագահ ինժեներ Մախմուրյանը

«Ազնևթից» պատվիրել էր. Կերոսին - 16.000.000 փութ: Նավթ - 20.000.000 փութ: Բենզին - 2.500.000 փութ: Տրանսֆորմատորային յուղ - 100 փութ(4, 43):

Ի դեպ, սա միայն Երևան քաղաքի համար էր պատվիրված: Ալեքսանդրապոլի պահանջների համար պատվիրված էր ևս 7.000.000 փութ նավթամթերք, իսկ Ղարաքիլիսայի համար՝ 1.500.000 փութ(4, 43):

Հատկանշական է, որ արխիվային փաստաթղթերը խոսում են այն մասին, որ Խորհրդային Հայաստանը «Ազնևթին» մատակարարումների համար վճարում էր ճիշտ ժամանակին, առանց ուշացումների: Նշենք, որ առկա էր նավթամթերքների մատակարարման համար գնացուցակ: Մայիսի 15-ին կնքված մեկ այլ պայմանագրով «Ազնևթը» պարտավորվում էր Խորհրդային Հայաստանի ԺՏԲԽ-ին շարժիչային յուղ մատակարարել 1 փութի դիմաց 40 կոպեկ գումարով, իսկ կերոսինի գինը 1 փութի դիմաց 47 կոպեկից իջեցվեց 40կոպեկի(4, 61): Մինչև հուլիսի 1-ը Խորհրդային Հայաստանին մատակարարված նավթի համար «Ազնևթի» հաշվին փոխանցվել է 11.113.43 ռուբլի ոսկով և 5.445.600 ՌՍՖԽՀ ռուբլով: Այդ մասին է վկայում Թբիլիսիում «Ազնևթի» լիազոր ներկայացուցչի գրությունը Խորհրդային Հայաստանի ԺՏԲԽ-ի նախագահին. «Մինչև սույն թվականի հուլիսի 1-ը մեր կողմից Ձեզ մատակարարված ապրանքների արժեքը կազմում է 11.113.43 ռուբլի ոսկով և 5.445.600 ՌՍՖԽՀ դրամանիշներով: Խնդրում եմ այս գումարը փոխանցել անհապաղ» (4, 46): Նախորդ ամիսներին Բաքվից ստացված նավթամթերքների համար Խորհրդային Հայաստանի ԺՏԲԽ-ն «Ազնևթի» հաշվեհամարին արդեն իսկ փոխանցել էր 7.520.000 ռուբլի գումար(4, 51):

1922թ. ընթացքում հայ-ադրբեջանական «նավթային փոխհարաբերությունների» կարևորագույն էջերից է օգոստոսին տեղի ունեցած միջադեպը, երբ «Ազնևթը» հրաժարվեց հայաստանյան ձեռնարկություններին մատակարարել առաջին կարգի կերոսին: Կասկածից վեր է, որ «Ազնևթը» չէր կարող առանց Խորհրդային Ադրբեջանի քաղաքական ղեկավարության համաձայնության նման քայլի դիմել: Կարծում ենք, որ ստեղծված իրադրության հիմնական պատճառը հանդիսանում էր այն, որ «Ազնևթը» շատ ավելի մեծ շահույթ էր ունենում առաջին կարգի կերոսինը արտասահմանյան երկրներ արտահանելուց, քան Խորհրդային Հայաստանին վաճառելուց: Ադրբեջանում որոշում էր կայացված նավթը հասցնել Բաթումի նավահանգիստ և այնտեղից վաճառել արտասահմանյան նավթային ընկերություններին: Արխիվում պահպանված փաստաթղթերը ապացուցում են, որ բացի ավելի մեծ շահույթ ստանալու նպատակից, «Ազնևթը» նաև այլ խնդիր էր լուծում: Հասկանալով, որ Խորհրդային Հայաստանի տնտեսության համար այդ ժամանակաշրջանում էներգակիրների կարևորագույն տարատեսակ հանդիսացող կերոսինը կենսական նշանակություն ունի և հայաստանյան ձեռնարկությունները ստիպված գնելու են նաև

երկրորդ կարգի կերոսին, ադրբեջանցիները, փաստորեն, ցանկանում էին Հայաստան արտահանել երկրորդ կարգի կերոսին, որը կուտակվել էր «Ազնևթի» պահեստներում և չէր սպառվում: Խորհրդային Ադրբեջանում ՀԽՍՀ տնտեսական ներկայացուցչին հղված գրության մեջ «Ազնևթի» կերոսինի բաժնի վարիչը նշում էր. «Այս իրավիճակը տևելու է ոչ ավել, քան 6-7 ամիս»(4, 29):

Բացի այս միջադեպից, 1922թ. ամռանը առաջ էր եկել ևս մեկ խնդիր: Հունիսին Բաքվի «Ազնևթի» գրասենյակից հաղորդվել էր Վրաստանի ժողկոմխորհին, որ Խորհրդային Ադրբեջանի տարածքից դուրս եկող և Վրաստանի տարածք մտնող նավթատար գնացքները կանգնեցվում են և արգելվում է նրանց մուտքը Խորհրդային Վրաստանի տարածք, իսկ այնտեղից՝ Խորհրդային Հայաստան: Պատճառը հանդիսանում էր նավթամթերքները հարկելու մասին նոր որոշումը: Իր հերթին ֆինանսների ժողովրդական կոմիսարիատը պահանջում էր հարկերը վճարել հենց տեղում և կանխիկ գումարով, մինչդեռ Խորհրդային Հայաստանի ԺՏԲԽ-ն, նաև Խորհրդային Հայաստանի տարբեր ձեռնարկություններ «Ազնևթի» հետ ունեին կնքած պայմանագրեր, համաձայն որոնց նավթամթերքների համար վճարումները կատարվում էին բանկային փոխանցումների տեսքով: Հետագա անախորժություններից խուսափելու համար «Ազնևթը» խնդրում էր ձեռնարկել համապատասխան միջոցներ և նշում, որ առկա խնդիրների պատճառներով ժամանակավորապես դադարեցնում է մատակարարումը(4, 58):

Ինչ վերաբերվում է նավթամթերքների հարկման խնդիրներին, ապա նշենք, որ համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողկոմխորհը 1922թ. մարտի 9-ին որոշում էին կայացրել հարկել նավթամթերքները և դրանց հետ կապված ապրանքները: Այս որոշումը պարտադիր դարձավ նաև «Ազնևթի» համար: Որոշման համաձայն, նավթայուղերի նկատմամբ սահմանվում էր հարկ 1 փութից 1 մինչպատերազմյան ռուբլու չափով, իսկ նավթից ստացված թափանցիկ քիմիական նյութերի, կերոսինի և բենզինի համար՝ 1 փութից 2 մինչպատերազմյան ռուբլու չափով: Ուլորտի հարկման ընդհանուր պատասխանատվությունը հանձնվում էր ֆինանսների ժողովրդական կոմիսարիատին, որը տեղերի ԺՏԲԽ-ների հետ միասին պետք է մշակեր հարկման սկզբունքները, կարգը և ժամանակացույցը: Որոշումը պարտադիր էր ՌՍՖԽՀ տարածքում և բոլոր միութենական հանրապետությունների համար(4, 65): Վերոհիշյալ որոշումը շրջաբերականի տեսքով ուղարկվեց նաև Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությանը և «Ազնևթին»՝ խնդիր դնելով հնարավորինս արագ ժամկետներում մշակել հարկային քաղաքականության ծրագրերը(4, 59):

Պետք է նշել, որ Խորհրդային Հայաստանի ղեկավար մարմիններն այս ժամանակաշրջանում նավթի առաքման դիմաց միշտ չէ, որ վճարում էին դրամական միջոցներով կամ ոսկով: Որոշ դեպքերում Խորհրդային Հայաս-

տանը նավթի մատակարարումների դիմաց վճարում էր նաև հայաստանյան արտադրության տարատեսակներով: Այս մասին է վկայում 1922թ. հունվարի 30-ին «Ազնևթի» ղեկավար Ա.Սերեբրովսկու և ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Այասնիկյանի ստորագրած համագործակցության վերաբերյալ պայմանագիրը: Այն բաղկացած էր 9 հոդվածներից: Պայմանագրի առաջին հոդվածի համաձայն՝ «Ազնևթը» Խորհրդային Հայաստանի ձեռնարկությունների կարիքների համար տրամադրում էր մոտ 100 հազար փութ նավթամթերք: Երրորդ հոդվածի համաձայն՝ նավթամթերքը բաց էր թողնվում 1914թ. հունվարի գներով: Չորրորդ հոդվածում նշված է, որ նավթամթերքի փոխարեն Խորհրդային Հայաստանի ԺՏԲԽ-ն Բաքու էր ուղարկելու Հայաստանի բոլոր պետական մարմինների տրամադրության տակ գտնվող ամբողջ ծծմբաքարը, գինին և կոնյակը: Պայմանագիրն ուժի մեջ էր մտնում 1922թ. փետրվարի 1-ից և գործելու էր մինչև 1923թ. մայիսի 1-ը (հոդված յոթերորդ): Ինններորդ հոդվածը նախատեսում էր, որ ստորագրման պահից «Ազնևթը» պարտավորվում էր Խորհրդային Հայաստանի ողջ տարածքում մասնավոր անձանց նավթ չվաճառել (4, 55):

«Ազնևթի» հետ մեկ այլ պայմանագիր Խորհրդային Հայաստանի իշխանությունները ստորագրեցին ապրիլի 26-ին Բաքվում: «Ազնևթի» կողմից այն ստորագրեց կազմակերպության ղեկավարի օգնական Դոցը, իսկ հայկական կողմից՝ Խորհրդային Հայաստանի ԺՏԲԽ-ի ներկայացուցիչ Արտեմ Զոհրաբյանը: Պայմանագիրը բաղկացած էր 14 հոդվածից: Առաջին հոդվածի համաձայն հայկական կողմը պարտավորվում էր Ալավերդու, Սուսիմադանի և Տանձուտի հանքերից «Ազնևթի» կարիքների համար տարեկան բաց թողնել 300 հազար փութ ծծմբաքար: Երկրորդ հոդվածը նախատեսում էր, որ հայկական կողմը պայմանագրի իրագործումը սկսելու էր մայիսի 15-ից: Պայմանագիրն ուժի մեջ էր համարվում մինչև 1923թ. մայիսի 15-ը: Երրորդ հոդվածով Խորհրդային Հայաստանից ուղարկվող ծծմբաքարը պետք է պարունակեր 40 տոկոսից ոչ պակաս ծծումբ և չպետք է խոնավ լիներ: Հաստատված չափորոշիչներին համապատասխան յուրաքանչյուր փութ ծծմբաքարի արժեքը սահմանվում էր 28 կոպեկ ոսկով (հոդված չորրորդ): Վեցերորդ հոդվածի համաձայն ծծմբաքարի որակը ստուգվելու էր հետևյալ կերպ. Բաքու ուղարկվող յուրաքանչյուր խմբաքանակից հայկական կողմի ներկայացուցչի մասնակցությամբ «Ազնևթի» ներկայացուցիչը վերցնում էր որոշակի քանակություն: Դրա կեսը ստուգվելու էր «Ազնևթի» լաբորատորիայում, իսկ մյուս կեսը պահվելու էր պահեստում՝ հետագա վեճերի դեպքում օգտագործելու համար: Ինններորդ հոդվածը նախատեսում էր, որ Խորհրդային Հայաստանից ուղարկվող ծծմբաքարի դիմաց «Ազնևթն» ուղարկելու է նավթ և կերոսին հետևյալ համամասնությամբ՝ 60 տոկոսը նավթ, 40 տոկոսը՝ կերոսին: Պայմանագրով նավթի մեկ փութի արժեքը սահմանվում էր 40 կոպեկ, իսկ կերոսինի

մեկ փութը՝ 50 կոպեկ: Բաքու ուղարկվող ծծմբաքարի նախորդ ամսվա խմբաքանակի դիմաց ադրբեջանական կողմը վճարելու էր հաջորդ ամսվա 15-ին: Պայմանագրի տասնմեկերորդ հոդվածի համաձայն, «Ազնևթը» որպես նախավճար հայկական կողմին տրամադրում էր 7 ցիստեռն նավթ և 3 ցիստեռն կերոսին: Տասներեքերորդ հոդվածում նշվում էր, որ պայմանագրի բնօրինակը պահվելու էր Բաքվում, իսկ կրկնօրինակը՝ Երևանում(5,22):

Ծծմբաքարի, ինչպես նաև ալկոհոլային արտադրանքի միջոցով նավթի համար վճարումները կատարելը ձեռնտու էր նաև Խորհրդային Հայաստանին: Տվյալ ժամանակաշրջանում Ադրբեջանի տնտեսության կարևորագույն ճյուղը համարվող նավթային արդյունաբերության ձեռնարկությունների համար դժվար չէր միջազգային շուկաներում սպառել իրենց արտադրանքը և շահավետ պայմանագրեր ստորագրել արտասահմանյան ընկերությունների հետ՝ էներգակիրների մատակարարման դիմաց վճարվելով արտարժույթային դրամական միջոցներով կամ ոսկով: Հիշենք, որ տվյալ ժամանակաշրջանում Խորհրդային Ադրբեջանի տնտեսության նավթարդյունաբերական ոլորտը համարվում էր տարածաշրջանում, թերևս, ամենազարգացածը: Ափշերոնի թերակղզում նավթ սկսել էին արդյունահանել Ադրբեջանում Խորհրդային կարգերի հաստատումից շատ ավելի վաղ շրջանում, և Բաքուն ցարական Ռուսաստանի տարածքում նավթարդյունաբերական առաջին խոշոր կենտրոնն էր, որտեղ ուղղվել էին արտասահմանյան ներդրումներ(2, 92): Բնականաբար, միջազգային շուկայում հայաստանյան ապրանքատեսակների սպառման և դրա դիմաց արտարժույթային դրամական միջոցների և ոսկու ձեռք բերման հարցում Խորհրդային Հայաստանը չէր կարող մրցակցել Ադրբեջանի հետ, ուստի և ապրանքափոխանակությունը որոշակի իմաստով ձեռնտու էր հայկական կողմին: Այսպիսով, կարող ենք հստակորեն նշել, որ Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետո երկրի ղեկավարության առջև ծառացած քայքայված տնտեսության վերականգնման համար Բաքվի նավթն ուներ կենսական նշանակություն, ինչը շատ լավ ընկալվում էր նաև Ադրբեջանում: Եթե հայկական կողմը շահագրգռված էր Խորհրդային Ադրբեջանից նավթի անխափան մատակարարումով և պարտաճանաչորեն վճարում էր առաքված նավթամթերքների դիմաց, ապա ադրբեջանցիները, գիտակցելով էներգակիրների կենսական նշանակության իրողությունը ՀՍԽՀ քայքայված տնտեսության զարգացման համար, հաճախ արհեստական խնդիրներ էին ստեղծում սեփական պայմանները թելադրելու, նաև քաղաքական զիջումներ կորզելու նպատակով:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

1. Օրջոնիկիձե Գ.Կ., Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան 1950
2. Колчин С., Нефть и газ Каспия: взгляд из России, Центральная Азия и Кавказ, №2/14, 2001
3. ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 2
4. ՀԱԱ, ֆ. 115, ց. 1, գ. 79
5. ՀԱԱ, ֆ. 115, ց. 1, գ. 83